

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄՓՈՓՈՆՈՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (4-037, 037¹) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ

Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5
ԱԺ պատգամավոր Գևորգ Պետրոսյան	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված (օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մաս)	Հոդվածի 1-ին մասով վարչական պատասխանատվություն է նախատեսվում հափշտակության բոլոր տեսակների համար, անկախ կատարման եղանակից: Այս պարագայում հասկանալի չէ նույն հոդվածի 3-րդ մասով գողության և հափշտակության մյուս տեսակների համար մանր չափերի տարբեր շեմեր նախատեսելը: Առաջարկվում է հափշտակության բոլոր տեսակների մանր չափերին վերաբերող կարգավորումները միասնականացնել:	Չի ընդունվել: «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասով գողության և հափշտակության մանր չափերի նկատմամբ դրսևորված տարբերակված մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 4-րդ մասով հափշտակությունների համար զգալի չափ է համարվում հանցագործության պահին Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից	Չի ընդունվել:

				<p>հինգհարյուրապատիկը զգերազանցող գումարը (արժեքը), իսկ գողության միջոցով հափշտակություն կատարելու պահին՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկից հինգհարյուրապատիկը զգերազանցող գումարը: Այսինքն՝ օրենսդիրը տարբերակված մոտեցում է դրսևորել գողության և այլ հափշտակությունների չափերի հետ կապված, որն արտահայտված է նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 53-րդ հոդվածում: Մանր չափի շեմերի տարբերությունը պայմանավորված է զգալի չափի շեմերի տարբերությամբ:</p>	
Աժ պատգամավոր Վլադիմիր Վարդանյան	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մաս (օրենսգրքի 177-րդ հոդված)	ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով որպես սանկցիա նախատեսված է կալանք՝ մեկից երկու ամիս ժամկետով, իսկ լրացվող 1.1-ին հոդվածում առաջարկվում է գրպանահատության սանկցիա նախատեսել մինչև երկու ամիս կալանքը: Մինչդեռ, հաշվի առնելով գրպանահատության հանրային	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:	

			վտանգավորություն, այդ արարքի համար նախատեսվել է ավելի խիստ ազատագրկման ժամկետներ, քան զգալի չափերով գողության համար: Առաջարկում եմ համանման մոտեցում ցուցաբերելու նպատակով, նախագծով փոփոխել կալանք պատժատեսակի համար սահմանված ժամկետը՝ նախատեսելով մեկից երկու ամիս:		
	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին մաս (օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-2-րդ մասեր)	Փոխել 177-րդ հոդվածի 1-ին մասի գողության հասկացությունը այն պես, որ հստակ լինի, որ զգալի չափը գողության պարտադիր հատկանիշ չէ: Ինչպես նաև, որակյալ հանցակազմից հանել զգալի չափը, որպեսզի հոդվածի երկրորդ մասով որակման համար զգալի չափը պարտադիր չլինի:	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացում:	Ընդունվել է:
	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին մաս (օրենսգրքի 177-րդ հոդված)	Վերախմբագրել զրպանահատության ձևակերպումն այն հաշվով, որպեսզի այն ներառի անձի մոտ գտնվող իրերի գողությունը, ինչպես նաև ձևակերպումից հանել տրանսպորտային միջոցի վերաբերյալ նշումը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է: